ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը հունվարի 2012թ. N 2-Ն
Քաղաք Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով Նոր Հաճնի քաղաքային համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Նոր Հաճնի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 14-ի «Նոր Հաճնի քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 34-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետի համայնքի բյուջեի մուտքերի և ծախսերի 194480,1 հազար դրամ գումարը փոխել 206431,9 հազար դրամով,

2. N2, N3, N6 հավելվածներում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 8000.0 հազար դրամ գումարը փոխել 9099,2 հազար դրամով, ֆոնդային մասի պահուստային ֆոնդի 5000,0 հազար դրամ գումարը՝ 16951,8 հազար դրամով,

3. N5 հավելվածում համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդի գումարը փոխել 6145,4 հազար դրամով, իսկ ֆոնդային մասի ազատ մնացորդի 19000,0 հազար դրամ գումարը՝ 24806,4 հազար դրամով, վարչական մասի միջոցների ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը հաստատել 6145,4 հազար դրամ,

4. N2 հավելվածի գործառնական դասակարգման 10.7.1 «Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)» ծախսի 4000,0 հազար դրամը փոխել 5000,0 հազար դրամով, N3 հավելվածի 4729 «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական հոդվածի 4600,0 հազար դրամը՝ 5600,0 հազար դրամով, ինչպես նաև N6 հավելվածի գործառնական դասակարգման 10.7.1 ծախսի տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածի 4000,0 հազար դրամը՝ 5000.0 հազար դրամով:

Ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Կ. Հարությունյան՝			
Կ. Գևորգյան՝			
Գ. Մաթևոսյան՝			
Կ. Ապրեսյան՝			
Ա. Գևորգյան՝			
Կ. Միրզոյան՝			
Գ. Մխիթարյան՝			
Հ. Հովսեփյան՝			

Քաղաքապետ՝ Գ. Մաթևոսյան